ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ.Սարահարթ
10փողոց 1նրբ. 1շենք
էլ. Փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

23.08.2021թ
Ե/ 255-2021

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաչատրյան

Ներկայացնում եմ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու թիվ 27-34 որոշումները:

Առդիր՝ 18 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ 1նրբ շ1
☎.091 700 667

16 օգոստոսի 2021թ

ՈՐՈՇՈՒՄ 27

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2021թ օգոստոսի 16-ի արտահերթ նիստի օրակարգը:

1. Սարահարթ համայնքի ավագանու 2021թ հունիսի 15-ի թիվ 21 որոշումը անվավեր ճանաչելու մասին
2. 2019թ հունիսի 20-ին Յուքոմ ՍՊԸ-ի եվ Սարահարթ համայնքի միջև կնքված թիվ 2395 հողամասի վարձակալության պայմանագրի մեջ փոփոխություն կատարելու եվ համաձայնագիր կնքելու մասին
3. Սարահարթ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
4. Սարահարթ համայնքում տեղական տուրք եվ վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին
5. Սարահարթ համայնքի համայնքային սեփականության գույքի գույքագրման փաստաթղթերում լրացում կատարելու մասին
6. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում աղբահանության եվ սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման ու իրականացման մասին

7. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում արխիվային գործի վարման կարգ հաստատելու մասին

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Սահակյան Լյովա			
Բարիկյան Հարություն			
Բարիկյան Վահան			

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ 1նրբ շ1
☎.091 700 667

16 օգոստոսի 2021թ

ՈՐՈՇՈՒՄ 28

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ԹԻՎ 21 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով՝ Սարահարթ համայնքի ավագանին

Որոշում է.

Անվավեր ճանաչել Սարահարթ համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 21 որոշումը:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Սահակյան Լյովա			
Բարիկյան Հարություն			
Բարիկյան Վահան			

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ **1նրբ** շ1
☎.091 700 667

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 29

«16» օգոստոսի 2021 թվականի

2019թ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ՅՈՒՔՈՄ ՍՊԸ-Ի ԵՎ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ 2395 ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ և 57-րդ հոդվածներով, , ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով՝ հաշվի առնելով 2019թ հունիսի 20-ին Յուքոմ ՍՊԸ-ի և Սարահարթ համայնքի միջև կնքված թիվ 2395 հողամասի վարձակալության պայմանագիրը և համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը,

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

2019թ հունիսի 20-ին Յուքոմ ՍՊԸ-ի և Սարահարթ համայնքի միջև կնքված թիվ 2395 հողամասի վարձակալության պայմանագրի 2.1 և 2.2 կետերում կատարել փոփոխություններ՝

ա)Վարձակալության տրամադրման ժամկետը երկարաձգել մինչև 2031թ օգոստոսի 31-ը:

բ) Հողատարածքի վարձակալության համար վարձավճարը սահմանել տարեկան 570000 (Հինգ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ առանց հարկերի:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Սահակյան Լյովա			
Բարիկյան Հարություն			
Բարիկյան Վահան			

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ 1նրբ 21
☎.091 700 667

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N30

16 օգոստոսի 2021թ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, 42 և 43 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.07.2010 թվական թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով, հաշվի առնելով որ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված 30.03.2021թ. N ԱՏ-30032021-06-0986 տեղեկանքը և համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, որ կադաստրային քարտեզի և տեղեկագրի համաձայն 06-097-0107-0006 ծածկագրի տակ գտնվող, 0.41528 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասը սխալմամբ համայնքային սեփականության փոխարեն հաշվառվել է անհայտ, և որևէ անձի նկատմամբ գույքային իրավունքի գրանցում չի իրականացված, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ճանաչել Սարահարթ համայնքի սեփականության իրավունքը 06-097-0107-0006 ծածկագրով 0.41528 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նկատմամբ համաձայն հատակագծի:

2. Համայնքի ղեկավար Ա. Փիլոյանին՝ դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, 06-097-0107-0006 ծածկագրով 0.41528 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նկատմամբ Սարահարթ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Սահակյան Լյովա			
Բարիկյան Հարություն			
Բարիկյան Վահան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ **1նրբ** 21
☎.091 700 667

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 31

«16» օգոստոսի 2021 թվականի

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Տեղական տուրքերի և վճարների մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարել փաստաթղթային եղանակով:
2. Հաստատել՝ Լոռու մարզի Սարահարթ համայնքի
   ա.Տեղական տուրք վճարողների գրանցամատյանի ձև՝ համաձայն թիվ 1 հավելվածի
   բ.Տեղական վճար վճարողների գրանցամատյանի ձև՝ համաձայն թիվ 2 հավելվածի
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Սահակյան Լյովա			
Բարիկյան Հարություն			
Բարիկյան Վահան			

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի
16.08.2021 թվականի թիվ 31-Ա որոշման

Ձև N 1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Տեղական տուրք վճարողների

ՀՀ	վճարողի			Տեղական տուրքի տեսակը	Հայտի ներկայացման ամսաթիվ	Տուրքի վճարման		Համայնքի ղեկավարի որոշման		թույլտվություն		
	Անուն ազգանուն /իրավաբանական անձի անվանում	ՀՎՀՀ/անձը հաստատող փաստաթղթի համատ	Գործունեության իրականացման վայրի հասցեն			ամսաթիվ	Գումար (դրամ)	համարը	ամսաթիվ	համարը	ամսաթիվ	Ժամանակահատվածը որի համար տրամադրվել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի
16.08.2021 թվականի թիվ 31-Ա որոշման

Ձև N 2

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Տեղական վճար վճարողների

	վճարողի			Տեղական վճարի տեսակը	Պայմանագրի / որոշման		վճարման	
Հ/Հ	Անուն, ազգանունը /իրավաբանական անձի անվանումը	ՀՎՀՀ/ անձը հաստատող փաստաթղթի համարը	Գործունեության իրականացման վայրի հասցեն		համարը	ամսաթիվ	ամսաթիվ	Գումար (ՀՀ դրամ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ **1նրբ** շ1
☎.091 700 667

«16» օգոստոսի 2021 թվականի

ՈՐՈՇՈՒՄ 32

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Սարահարթ համայնքի համայնքային սեփականության գույքի գույքագրման փաստաթղթերում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Սահակյան Լյովա			
Բարիկյան Հարություն			
Բարիկյան Վահան			

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

Հավելված
Սարահարթ համայնքի
ավագանու 16.08.2021. N 32 որոշման

հհ	Ապրանքանյութական արժեքի անվանումը	Չափի միավ.	գինը	Փաստացի		Հաշվ. Հաշվ. տվյալ.	
				քանակը	գումար	քանակը	գումար
1	Ֆուտբոլի դաշտ	հատ	39000000	1 հատ	39000000	1	39000000
2	Ոռոգման համակարգ	մ	32100	620	19902000	620	19902000
3	Խոտհնձիչ	հատ	350100	1	350100	1	350100
4	Սերմնացան սարք	հատ	22050	1	22050	1	22050

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ **1նրբ** շ1
☎.091 700 667

«16» օգոստոսի 2021 թվականի

ՈՐՈՇՈՒՄ 33-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետով և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, 8-րդ հոդվածի 1,4,5,6 և 7-րդ կետերով, 10-րդ հոդվածի 4-րդ կետով, 13-րդ հոդվածով և 19-րդ հոդվածի 4-րդ կետով՝

համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելված 3-ի:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Սահակյան Լյովա			
Բարիկյան Հարություն			
Բարիկյան Վահան			

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

Հավելված թիվ 01
ՀՀ Լոռու մարզի Սարահարթ
համայնքի ավագանու
2021թ.-ի օգոստոսի 16-ի թիվ 33-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Աղբի հեռացումը Սարահարթ համայնքի վարչական տարածքից պետք է կատարվի համայնքի տարածքում տեղադրված աղբարկղերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:

Աղբի հեռացումը աղբարկղերից պետք է կատարվի մասնագիտացված աղբատար մեքենայով: Աղբը պետք է հեռացվի մինչև աղբարկղի ամբողջությամբ լցվելը:

Աղբարկղերի շրջապատում առկա և հեռացման ընթացքում թափված աղբը պետք է հավաքվի և հեռացվի: Աղբատար մեքենաները և աղբամանները պետք է ենթարկվեն ախտահանման ախտահանիչ լուծույթներով: Անհատական շենքերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից աղբի հեռացումը պետք է կատարվի միայն աղբի հեռացման համար նախատեսված բեռնատար մեքենաներով, փաթեթավորված կամ տարրաներում լցված աղբի բարձման միջոցով: Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պետք է պարտադիր հեռացվի՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

Սարահարթ համայնքում աղբահանությունը պետք է իրականացվի համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

Մասնավոր առանձնատներ՝

Շաբաթական 1 անգամ

N	Աղբամանների գտնվելու վայրը	Աղբարկղերի քանակը /հատ/	Տեսակը
	1 փողոց 2 տան մոտ	2	Մետաղյա
	1 փողոց 8տան մոտ	2	Մետաղյա
2	1 փողոց 16 տան մոտ	2	Մետաղյա
3	1 փողոց 24 տան մոտ	1	Մետաղյա
4	1 փողոց 27 տան մոտ	1	Մետաղյա
5	1 փողոց 29 տան մոտ	1	Մետաղյա
6	1 փողոց 39 տան մոտ	2	Մետաղյա
7	1 փողոց 51 տան մոտ	2	Մետաղյա
8	1 փողոց 56 տան մոտ	1	Մետաղյա
12	1 փողոց 1 նրբանցք 6 տան մոտ	1	Մետաղյա

13	1 փողոց 2 նրբանցք 16 տան մոտ	1	Մետաղյա
14	2 փողոց 7 տան մոտ	2	Մետաղյա
15	3 փողոց 6 տան մոտ	1	Մետաղյա
16	5 փողոց 15 տան մոտ	1	Մետաղյա
	6 փողոց 15 դպրոցի մոտ	1	Մետաղյա
17	6 փողոց 1 փակ 2 Ֆուտբոլի դաշտի մոտ	1	Մետաղյա
	6 փողոց 9 տան մոտ	1	Մետաղյա
18	10 փողոց 5 տան մոտ	1	Մետաղյա
19	10 փողոց 18 տան մոտ	1	Մետաղյա
20	10 փողոց 1նրբ. 12 համայնքապետարանի մոտ	1	Մետաղյա
21	11 փողոց 2 տան մոտ	2	Մետաղյա
22	13 փողոց 3 տան մոտ	1	Մետաղյա
23	14 փողոց 1 տան մոտ	1	Մետաղյա
24	15 փողոց 15 տան մոտ	1	Մետաղյա
25	15 փողոց 3 տան մոտ	1	Մետաղյա
	Շիրակի խճուղի, Մ7 ավտոմայրուղու մոտ	4	Մետաղյա

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Կիրակոսյան

Հավելված թիվ 02
ՀՀ Լոռու մարզի Սարահարթ
համայնքի ավագանու
2021թ.-ի օգոստոսի 16-ի թիվ 33-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

Սարահարթ համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, բակերի, կամուրձների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, կենդանիների դիակներից, ձյունից: Համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն սահմանափակվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

Ամառային մաքրում Այն իր մեջ ընդգրկում է ձեռքի աշխատանք:

Ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքների մաքրումը աղբից, տերևակալումից, կենդանիների դիակներից՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը:

Աղբը հավաքվում է փողոցներում տեղադրված աղբարկղերում:

Ձմեռային մաքրում Այն իր մեջ ընդգրկում է փողոցների մաքրումը ձյունից, սառցակույտերի մաքրումը և հեռացումը: Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովում է փողոցների մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Ընդհանուր օգտագործման տարածքների առաջացող աղբի ծավալը տարվա ընթացքում կազմում է՝ 420 տոննա:

Սարահարթ համայնքում սանիտարական մաքրման համար անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները

Սարահարթ համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը պետք է կատարվի միայն աղբահանության համար օգտագործվող բեռնատար մեքենաների միջոցով՝ ձեռքով, իսկ աղբամաններից մեքենայացված բարձման միջոցով:

Փողոցներից ձյան մաքրման աշխատանքները պետք է կատարվի համապատասխան մասնագիտացված մեքենայի կամ դրան փոխարինող մեխանիզմների միջոցով:

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Կիրակոսյան

Հավելված թիվ 03
ՀՀ Լոռու մարզի Սարահարթ
համայնքի ավագանու
2021թ.-ի օգոստոսի 16-ի թիվ 33-Ն որոշման

Կարգ
ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման

Սարահարթ համայնքում աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե վերապահվել է համայնքի աշխատակազմին:

Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսեկան տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

Սարահարթ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և հաշվարկումը կատարվում է համայնքի ավագանու կողմից սահմանված վճարի դրույքաչափին համապատասխան՝

Կենցաղային աղբի համար՝

ըստ բնակության հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի.

Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Սարահարթ համայնքի ղեկավարը:

Աշխատակազմի քարտուղար Ս. Կիրակոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ **1նրբ** շ1
☎.091 700 667

«16» օգոստոսի 2021 թվականի

ՈՐՈՇՈՒՄ 34-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Արխիվային գործի մասին,, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում արխիվային գործի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. 2021թ-ի դրությամբ ժամանակավոր պահպանության ժամկետը լրացած համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության՝ մշտական պահպանության:

3. Համայնքի ղեկավարին՝ հետագայում պահպանել սույն կարգով սահմանված ժամկետում համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Սահակյան Լյովա			
Բարիկյան Հարություն			
Բարիկյան Վահան			

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

Հավելված
Սարահարթ համայնքի ավագանու
2021թ-ի օգոստոսի 16 -ի թիվ 34-Ա որոշման

ԿԱՐԳ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի (անկախ դրանց նկատմամբ սեփականության իրավունքից) համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, ինչպես նաև արխիվային գործի հետ առնչվող իրավահարաբերությունները:

2. Համայնքի ավագանին՝

1) որոշում է կայացնում համայնքային արխիվի ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

2) որոշում է համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

3. Համայնքի ղեկավարը՝

1) ներկայացնում է ավագանու հաստատմանը համայնքային արխիվ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշման նախագիծը.

2) ապահովում է համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը:

3) կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը.

4. Համայնքի աշխատակազմը՝

1) ապահովում է համայնքի արխիվային գործի վարումը.

5. Համայնքային արխիվների ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է համայնքային բյուջեների միջոցների հաշվին:

6. Տեղական ինքնակառավարման մարմինները և նրանց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունները, իրենց գործունեության ընթացքում առաջացած արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով մինչև պետական կամ համայնքային արխիվ մշտական պահպանության հանձնելը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացնելը պարտավոր են ստեղծել արխիվ:

7. Համայնքի սեփականություն են՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերը.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ համայնքին որպես սեփականություն հանձնած արխիվային փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

8. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի պահպանությունն իրականացվում է հետևյալ կերպ.

1) մշտական պահպանություն՝ պետական կամ առկայության դեպքում համայնքային արխիվներում:

2) ժամանակավոր պահպանություն՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում՝ սույն օրենքով սահմանված ժամկետների ընթացքում:

9. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի՝ համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի ժամանակավոր պահպանության ժամկետները լրանալուց հետո կարգավորված, տեղեկատու-որոնողական միջոցների հետ մշտական պահպանության են հանձնվում պետական կամ առկայության դեպքում համայնքային արխիվներ:

10. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերը ժամանակավոր (մինչև պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելը) պահպանելու առավելագույն ժամկետ տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների փաստաթղթերի համար սահմանվում է 5 տարի.

11. Տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքային կազմակերպություններն ապահովում են Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերի կարգավորումը, նախապատրաստումը և պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնումը:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների լուծարման դեպքում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերը (ներառյալ՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը անձնակազմին վերաբերող) հանձնվում են պետական կամ համայնքային արխիվներ:

13. Համայնքային կազմակերպությունների մասնավորեցման (սեփականաշնորհման) դեպքում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերը (ներառյալ՝ մինչև 2010 թվականի հունվարի 1-ը անձնակազմին վերաբերող) հանձնվում են պետական կամ համայնքային արխիվներ:

14. Համայնքային կազմակերպությունների լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը կազմակերպում է լուծարվող կազմակերպության մինչև 2010 թվականի հունվարի 1-ը գործունեությամբ առաջացած անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայնքային արխիվ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ